ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/123

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ
Բողոքաբեր՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-21/5» ծածկագրով գնանշման հարցում, պահնորդական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) կողմից 10.12.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է՝ արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը, պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 10.12.2020թ.-ին:

11.12.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/123 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

18.12.2020թ.-ին և 29.12.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 18.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.12.2020թ.-ին:

2. «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 10.12.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) 04.12.2020 թվականին հայտարարել է «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-21/5» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իր կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքերման նպատակով: Հիմք Պատվիրատուի 2020-12-04 թկականի հայտարարությունը:

1.2. Գնման Ընթացակարգի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆԱՒԹԱԳԻՐ-ի 6-րդ կետը շարադրված է «6. Կատարողը կազմակերպում է դասընթացներ հակահրդեհային և արտակարգ այլ իրավիճակների հարցերով:»

1.3. Պահնորդական ծառայությունները կարգավորվում են «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ Օրենքով և օրենքով Պահնորդական գործունեություն իրականացնող լիցենզավորված կազմակերպությունը Կատարողը, իրավունք չունի կազմակերպել արտակարգ այլ իրավիճակների հարցերով և հակահրդեհային դասընթացներ, նման գործառույթները վերապահված են ԱԻ Նախարարության համապատասխան ստորաբաժանումների վրա:

1.4. Կատարողը, արտակարգ այլ իրավիճակների հարցերով և հակահրդեհային դասընթացներ իրավունք չունենալով, չկարողանալով կազմակերպել ու տեխնիկական

բնութագրով սահմանված պահանջը՝ պարտավորությունը, չկարողանալով կատարել կենթարկվի համապատասխան պատասխանատվության, այսինքն Գնման առարկայի հատկանիշները բավարար ճշտությամբ սահմանված չեն որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ Գնման առարկայի բնութագրերը

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ժավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի՝ Գնումների ընթացակարգի կասեցումը

1. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

2. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն մասով նախատեսված որոշումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գնման առարկայի հատկանիշները բավարար ճշտությամբ սահմանված չեն որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, հնարավորություն չի տալիս մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան: Ուստի նաև նման խախտմամբ կնքվելիք պայմանագրից զերծ մնալը Մասնակցին տրված իրավունքն է:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը, պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը:

3. <u>«Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 11.12.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-Լ0/2/18492-2020 գրությամբ դիմել է «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 10.12.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 24.06.2020թ.-ի թիվ Մ-24213-2020 գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-21/5 գնման ընթացակարգի բնութագրում 6-րդ կետը ներառվել է

ակնկալելով, որ կնքվող պայմանագրի շրջանակներում մատուցվող պահնորդական ծառայությունները լինեն ավելի արդյունավետ և որակյալ:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/123 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով 04.12.2020թ.-ին հայտարարվել է «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում անվտանգության ապահովման ծառայությունների (պահնորդային ծառայությունների) ձեռքբերումը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 71311420:

iii. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝ բացի այլ բնութագրերից սահմանվել է նաև, որ կատարողը կազմակերպում է դասընթացներ հակահրդեհային և արտակարգ այլ իրավիճակների հարցերով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 10.12.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով Բողոքաբերների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Թիկնապահական և պահնորդական գործունեության հիմնական խնդիրներն են՝

1) ֆիզիկական անձանց (նրանց կողմից պայմանագրում նշված անձանց) կյանքի և առողջության պաշտպանության նպատակով թիկնապահական ծառայությունների մատուցումը.

2) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (նրանց կողմից պայմանագրում նշված անձանց) գույքի, գույքային իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության նպատակով պահնորդական ծառայությունների մատուցումը.

3) պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային սահմանված պայմանակարգերի ապահովումը:

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ թիկնապահական և պահնորդական գործունեությունն իրականացնելիս կարող են մատուցվել հետևյալ ծառայությունները՝

1) ֆիզիկական անձի կյանքի և առողջության պաշտպանությունը հակահիրավական ոտնձգություններից (այդ թվում՝ զենքի օգտագործմամբ).

2) սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ և շարժական գույքի, տարածքի պահպանությունը.

3) պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը.

4) հատուկ կապի և տրանսպորտային միջոցների տրամադրումը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը պայմանագրով նախատեսված դեպքերում կարող է իրականացնել նաև հատուկ կապով և տրանսպորտային միջոցով սպասարկում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով 04.12.2020թ.-ին հայտարարված «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում անվտանգության ապահովման ծառայությունների (պահնորդային ծառայությունների) ձեռքբերումը և բացի այլ բնութագրերից սահմանվել է նաև, որ կատարողը կազմակերպում է դասընթացներ հակահրդեհային և արտակարգ այլ իրավիճակների հարցերով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը փաստում է, որ բողոքի քննության վեճի առարկա հանդիսացող ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի 6-րդ կետով սահմանված տեխնիկական բնութագիրը, այն է՝ կատարողը կազմակերպում է դասընթացներ հակահրդեհային և արտակարգ այլ իրավիճակների հարցերով, պահանջը հակասում է Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին, քանի որ այն օբյեկտիվորեն հիմնավորված չէ և համարժեք չէ այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է տվյալ գնումը,

ինչպես նաև այդպիսի պահանջը, որպես գնման առարկայի հատկանիշ, զրկում է մասնակցին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Ընդ որում, հարկ է փաստել նաև, որ «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով, որով սահմանված է թիկնապահական և պահնորդական գործունեության հիմնական խնդիրներն ու մատուցման ենթակա ծառայությունների շրջանակը, առկա չէ դասընթացներ հակահրդեհային և արտակարգ այլ իրավիճակների հարցերի վերաբերյալ դասընթացներ կազմակերպելու իրավասություն, որպիսի պայմաններում՝ այդ հիմքով ևս, Ընթացակարգի Հավելված 1-ում առկա դասընթացներ կազմակերպելու պահանջը չի կարող ելնել գնման առարկայի՝ պահնորդային ծառայությունների մատուցման հնարավորության շրջանակներից: Այլ կերպ ասած՝ դասընթացներ իրականացնողը՝ սուբյեկտը, չի կարող նույնանալ թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող, ծառայություններ մատուցող տնտեսվարող սուբյեկտի հետ:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից հայտարարված գնման ընթացակարգի գնման առարկայի բնութագրերy (Հավելված 1-ի 6-րդ կետ) ամբողջությամբ և հստակ չեն նկարագրում ձեռքբերվող ծառայության հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Բացի այդ նման բնութագրերն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք չեն այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 10.12.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/123 ծածկագրով բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**